

Ջերմորեն շնորհավորում եմ սոցիալական աշխատողներին մասնագիտական օրվա առթիվ:

Սոցիալական աշխատողի ուսերին է դրված օգնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդուն, ընտանիքին, աջակցել նրան լուծելու իր խնդիրները: Այս առաքելության իրականացումը անհնար կլիներ առանց ձեր բարեխիղճ և անձնանվեր աշխատանքի:

Այս օրերին, երբ մենք ընդունում ենք ԼՂ-ից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, առավել քան երբևէ կարևորում և գնահատում ենք սոցիալական աշխատողի դերը և նրա կատարած աշխատանքը: Մեր հայրենակիցների հաշվառման, կարիքների գնահատման, ծագած խնդիրների լուծման, ուղղորդման համար մենք պարտական ենք սոցիալական աշխատողին: Կյանքի բեկումնային իրավիճակում հայտնված մեր հայրենակիցների կողքին ամենամոտը կանգնած են հենց սոցիալական աշխատողները:

Մասնագիտական տոնի առթիվ ցանկանում եմ իմ շնորհավորանքի և երախտիքի խոսքը հղել Մեծամոր համայնքի սոցիալական ոլորտի և սոցիալական աջակցության և առողջապահության բաժնի աշխատակիցներին: Մաղթում եմ քաջառողջություն, բարեկեցություն, նոր ձեռքբերումներ ձեր մարդասիրական գործում: